

# Արևիկ Դռազյան

## ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏԸ ՈԱՖԱՅԵԼ ԱԹՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Բանալի բառեր - նատյուրմորտ, վրձնահարված, իրապաշտական ոճ, եռամաս բաժանում, իրերի նյութեղենություն, լուսանկարչական ճշգրտություն:

Ռաֆայել Գեղամի Աթոյանը XX դարի երկրորդ կեսի և XXI դարի հայ կերպարվեստի վառ անհատականություններից է: Ծնունդով լենինականցի գեղանկարիչը, սկսելով ստեղծագործել դեռևս դպրոցական տարիներից, մասնագիտական կրթություն է ստացել նախ Լենինականի (Գյումրի) Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոցում՝ Հակոբ Անանիկյանի դասարանում<sup>1</sup> (1944-46թթ.), ապա Երևանի Թերլենեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում (1948-53թթ.) և Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության բաժնում՝ աշակերտելով Հովհաննես Զարդարյանին և Էդուարդ Իսաբեկյանին (1954-59թթ.):

Մեծ է Ռաֆայել Աթոյանի ներդրումը հայ գեղանկարչության զարգացման ասպարեզում: Համարվելով 1960-ականների արվեստի հեղաշրջման սերնդի ներկայացուցիչ՝ Աթոյանը ամենևին էլ չի ձգտել եվրոպական ավանգարդիստական ձևերին, նա ստեղծագործում էր իրապաշտական ոճով՝ ժամանակակից մնալով թեմաների ընտրության և գաղափարների վերհանման հարցում: Տարիների ընթացքում Աթոյանի ոճը անհատականացվում է և բյուրեղանում, որը նորանոր լրացումներ ու ճշգրտումներ է բերում: Եկար աշխատելով կտավների վրա՝ նա ժամանակ առ ժամանակ անդրադառնում, վերջնական տեսքի էր բերում և ամբողջացնում դրանք: Ինչպես նկարիչն էր նշում. «Իմ առաջին վրձնահարվածները ունեն խոշոր ընդհանրացումներ, բայց հետագայում աշխատում եմ մանրուքների վրա երկար ու տառապալից: Դժվարությամբ եմ դնում ստորագրությունս ավարտված աշխատանքի վրա, բայց ստորագրելուց հետո, երբեք չեմ անդրադառնում»<sup>2</sup>: Ստորագրության մասին կցանկանանք նշել, որ Հայաստանում ստեղծագործած տարիներին գեղանկարիչը ստորագրում էր «Ռ. Աթոյան», սակայն Ֆրեզնո տեղափոխվելուց հետո ստեղծագործությունների մեծ ասում հանդիպում է նկարչի լատինատառ ստորագրությունը՝ «R. Atoyán»:

Ստեղծագործական կյանքի ընթացքում նա կերտել է գեղանկարչական և գծանկարային մեծ թվով երկեր՝ իրեն դրսևորելով տարբեր ժանրերում՝ բնանկար,

<sup>1</sup> Տե՛ս **Աղայան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2008, էջ 145:

<sup>2</sup> Ռաֆայել Աթոյան, Երևան, 2013, «Տիգրան Մեծ» հրատ., էջ 9:

նատյուրմորտ, դիմանկար, թեմատիկ-կոմպոզիցիոն ժանր: Աշխատել է մեծ մասամբ յուղաներկով և ջրաներկով, ինչպես նաև տեմպերայով, արել է նաև մատիտանկարներ:

Այս հոդվածը գեղանկարչի նատյուրմորտ ժանրի ստեղծագործությունների նկարագրական, վերլուծական և համեմատական ուսումնասիրություն է:

Հետաքրքիր են Ռաֆայել Աթոյանի որոնումները նատյուրմորտի ժանրում: Այստեղ նա ազատ է և՛ գունային համադրման, և՛ հորինվածքի կառուցման առումով՝ հասնելով զարմանալի արտահայտչականության: Գեղանկարիչը իր ստեղծագործությունները կառուցում է հորինվածքային հստակ տարածականությամբ՝ պատկերը հիմնականում բաժանելով երեք մասերի: Չկան կտրուկ հակադրություններ, պատկերված բոլոր հատվածները ներդաշնակ են, հավասարակշիռ: Նատյուրմորտներն առանձնանում են առարկայի ներքին ռիթմը ճշգրտորեն արտահայտելու հմտությամբ և իրերի պատկերման նյութական կոնկրետությամբ: Արվեստագետն այս ժանրում ընդգրկում է ազգային մշակույթի տարբեր տարրեր, կենցաղային իրեր, հին մասունքներ, մրգեր, արվեստագետի «գործիքներ», ինչպես նաև իր արվեստանոցում եղած զանազան առարկաներ: Նա անվերապահորեն բարձր է գնահատում բոլոր այն իրերը, առարկաները, որոնք ստեղծվել են մարդու ձեռքով, քանի որ մարդը դրանց մեջ տեղավորել է իր էության մի մասը:

Ռաֆայել Աթոյանի նատյուրմորտի ժանրի աշխատանքներում իր ուրույն տեղն ունի գույնը: Նա հիմնականում նախընտրում էր դեղնաշագանակագույնը՝ իր տարբեր երանգներով ու խառնուրդներով: Ստեղծագործական տարբեր շրջաններում օգտագործելով տարբեր գույներ և դրանց երանգավորումները՝ գեղանկարիչը հավատարիմ է մնացել բնության իրական գույներին: Աթոյանը գտնում էր, որ որքան էլ տաղանդավոր և ինքնատիպ լինի նկարիչը, նրա արվեստը թերի կլինի, եթե չունի ազգային գունամտածելակերպ<sup>1</sup>: Այս առումով իր ոչ անմիջական ուսուցիչն էր համարում Մարտիրոս Սարյանին և գտնում էր, որ նա բոլոր ժամանակների հայ մեծագույն նկարիչն է, հայ արվեստի կաթողիկոսը<sup>2</sup>:

Աթոյանի վաղ շրջանի (1947-1960թթ.) ստեղծագործություններից է «Նատյուրմորտ» աշխատանքը (1962), որտեղ գեղանկարիչը խորությունը արտահայտել է իրերի դեպի վեր դասավորման սկզբունքով<sup>3</sup>: Դաշտային փոքր հատվածում փռված են սավաններ, որոնց վրա էլ դասավորված են նատյուրմորտի բաղկացուցիչ մասերը: Կտավը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հորիզոնական հատվածների, որոնցում առանձնանում է կենտրոնական մասը: Վերջինս պատկերային առումով առավել հագեցած է, քան առաջին և երրորդ

<sup>1</sup> Տե՛ս Մուրադյան Մ., Անհատական պատկերասրահի ֆիլիպիններում, «Երեկոյան Երևան», Երևան, 1987, դեկտեմբերի 18, № 174, էջ 3:

<sup>2</sup> Ռաֆայել Աթոյան (Տե՛ս <http://www.youtube.com/watch?v=uCuM8rxJ4NE>):

<sup>3</sup> Կոմպոզիցիայի նման կառուցումը բնորոշ էր նրա այս շրջանի մյուս ժանրերի գործերին ևս:

հատվածները: Այստեղ կապույտ հիմնագույնի վրա նկարված են համապատասխան գույներով երկու կամ երեք խմբերով դեղձ, խնձոր, սերկևիլ, կիտրոն: Դրանց շարքում կենտրոնից մի փոքր ձախ պատկերված են նկարչական վրձիններ և կուժ: Նկարի առաջին մասում սպիտակ հիմնագույնի վրա առանձնանում են դեղնագույն կիտրոնները: Վերևում՝ երրորդ հատվածում, նկարիչը ներկայացնում է դաշտի տեսարանը սահուն գծային վրձնահարվածներով պատկերված բույսերի և աջ մասի ծաղկային լուծման շնորհիվ: Ի դեպ նշենք, որ այստեղ ներկայացված ծաղիկները իրենց տեսակով հիշեցնում են Մարտրոս Սարյանի «Ծաղիկներ Քաղակիկից» աշխատանքը (1914), թեև Աթոյանի այս կտավի ծաղիկները առավել ընդհանրացված են և բաց գունային լուծում ունեն:

1970-ական թվականներին Ռաֆայել Աթոյանը ստեղծում է արդեն լիարժեք, անհատական մոտեցմամբ առանձնացող ստեղծագործություններ: Գեղանկարչի ընտրած թեմաներն ընդլայնվում են: Միաժամանակ նա անդրադառնում է նախկինում ընտրած թեմաներին՝ ենթարկելով դրանք տարատեսակ փոփոխությունների: Կարծում ենք, որ այս ձևով աշխատելը սկզբունքային էր Աթոյանի համար ընդհանրապես, քանի որ հետագա տարիներին ևս նա շարունակում է փոփոխությունների ենթարկելով պատկերները՝ նոր շունչ ու արտահայտչականություն հաղորդել դրանց: Արվեստաբան Մարինա Ստեփանյանը, նկարչին նվիրված կատալոգում գրում է. «Նա ձգտում էր պատկերել ֆիզիկականի ու հոգևորի բնական ներդաշնակությամբ լի աշխարհ, որի գեղանկարչապլաստիկական առանձնահատկությանը հասնելու համար դիմում էր միևնույն մոտիվի բազմաթիվ տարբերակների»<sup>1</sup>:

1970-80-ական թվականների Ռաֆայել Աթոյանի հեղինակած նատյուրմորտները կրում են իր ստեղծագործական հասուն շրջանն ապրող գեղանկարչի ուրույն ձեռագրի կնիքը: Չեզոք խորքի վրա հաստ քսվածքներով և ընդհանրաված գծերով արտահայտված բուսական պատկերներից մինչև իրերի ու ծաղիկների մանրամասն մշակում. Աթոյանը մեկը մյուսի հետևից կերտում է հիանալի նատյուրմորտ աշխատանքներ՝ փոփոխությունների ենթարկելով իր նախընտրած տարրերի (կուժերի մեջ չորացած դաշտային ծաղիկներ, նուռ, տարատեսակ հին կուժեր) դիրքերն ու համադրությունները: Համալրում է նատյուրմորտային առարկաների շարքը նոր պատկերներով, ինչպիսիք են խաչքարը, մոմակալը, գանգը, գրքեր, թեև ավելի ուշ շրջանում մենք այլևս օրինակ չունենք, որտեղ վերջիններս լինեն պատկերված:

1970-ականներին Ռաֆայել Աթոյանի նատյուրմորտները պատկերվելիք իրերի ընտրությամբ, հորինվածքի կազմակերպմամբ արդեն լիովին տարբերվում են մեր ներկայացրած նախորդ օրինակից, ինչպես նաև այն ստեղծագործություններից, որ

<sup>1</sup> Степанян М., Рафаэл Атоян, Москва, 1988, изд. «Советский художник», с. 13:

ստեղծել է հաջորդ տարիներին: Թանձրաշերտ գունային չեզոք խորքի վրա արվեստագետը կերտում է սեղանին կամ սեղան հիշեցնող իրի վրա դրված կավե ծաղկամանով դաշտային ծաղիկների պատկերներ, որոնք գրեթե կրկնվում են, միաժամանակ յուրաքանչյուր նատյուրմորտում առանձնանում յուրովի: Վառ օրինակ են «Ծաղիկներ» (1977), «Ծաղկեփունջ» (1977), «Աշնանային ծաղկեփունջ» (1977) նատյուրմորտները: Այս երեք գործերը նշված հերթականությամբ դնելով կողք կողքի՝ դառնում են մեկը մյուսի շարունակությունը: 1977թ. նա ստեղծում է ևս մեկ ինքնատիպ ստեղծագործություն՝ «Նատյուրմորտ ծղոտե աթոռով»: Այստեղ հորինվածքային հագեցվածությունը համալրվում է նոր պատկերներով, ինչպիսիք են հին ծղոտե աթոռը, սպիտակադեղին ծաղիկներով սափորի կողքին դրված ջրամանը և երկար բազմագույն վզնոցը, որը ասես մեկ ակնթարթում կընկնի աթոռից: Կտավի խորքը գունային ավելի մուգ ձևավորում ունի՝ շագանակագույնի մուգ և բաց երանգային խաղերով:

Այս չորս նատյուրմորտ աշխատանքների յուրօրինակ շարունակությունն է «Նատյուրմորտ հայելիով» մեծադիր կտավը (1978): Ռաֆայել Աթոյանը այստեղ ներմուծում է նոր տարրեր, որոնք նոր գեղարվեստական արտահայտչականություն են հաղորդում կտավին: Պատուհանագոգին դրված մեզ արդեն հայտնի դաշտային և սենյակային ծաղիկներով կավե ծաղկամանների կողքին մենք տեսնում ենք ծաղիկներ արտացոլող հայելու պատկեր, դրա դիմաց նռան և խնձորի պատկերներ: Նատյուրմորտներում հայտնվող տարատեսակ խորհրդանիշների շարքում, կարծում ենք, հայելին իր յուրօրինակ խորհրդաբանությունն ունի. այն խորհրդանշում է ճշմարտությունը. հայելին իրապես արտահայտում է այն, ինչ տեսնում են ուրիշները: Լինելով իրապաշտ նկարիչ՝ Աթոյանը, հավանաբար, այս միջոցով ևս մեկ անգամ փորձել է ցույց տալ այն իրականություն ու նյութեղենությունը, որ ունեն պատկերված իրերն իր ստեղծագործություններում: Նկարի խորքը մուգ գունային լուծում ունի, իսկ վերևում պարանին ամրացված վարագույրի պես ընկած և փաթաթված սպիտակ կտորները կոտրում են այդ մգությունը, և նկարին հաղորդում կենցաղային ու առօրեական բնույթ: Գեղանկարիչը այս կտավում լայնորեն կիրառում է իր ամենանախընտրած գույնի՝ դեղանաշագանակագույնի տարատեսակ երանգները: Նկարի կենտրոնում արվեստագետը այդ երանգներին համադրել է նաև կարմիրի և նարնջագույնի տեղ-տեղ վառ արտահայտված հատվածներ, որոնք բացում են աշխատանքի գունային ընդհանուր կոլորիտը՝ առանց գերակշռող երանգներից առանձնանալու կամ դրանց հակադրվելու: Վերոնշյալ նատյուրմորտների գունաշերտի հարաբերակցությունը կարծես համապատասխանում է բնօրինակային նախնական տպավորությանը: Նկարիչը կարողանում է նման նատյուրմորտներում առարկաների ներքին լուսավորությունը հասցնել ծայրաստիճան արտահայտչականության:

Իր տեսակով հետաքրքիր է «Հին լամպեր» (1977) նատյուրմորտ կտավը, որն արված է պաստելով և թանաքով: Աթոյանը կարմրանարնջագույնի և սև գույների հաստ և բարակ քսվածքների միջոցով ստեղծած չեզոք խորքի վրա իրար կողք է տեղադրում տարբեր չափսերի հին լամպերի պատկերներ: Նա ընդհանրական գծերի միջոցով արտահայտում է նաև դրանց որոշակիորեն զարդարված լինելը:

1979թ. է թվագրվում «Նռներով նատյուրմորտ» աշխատանքը: Աթոյանը համատարած թանձրաշերտ ոսկեգույնով է ողողում իրերը, որոնք տվյալ դեպքում հանդիսանում են կտավի կենտրոնում հորիզոնական տեղադրված կուլան, կավե ամանով ալոե հիշեցնող բույսը, դեղին ծաղիներով ծաղկեփունջը և նրանց դիմաց դրված նռներն ու կիտրոնը: Նրբությամբ են պատկերված իրերի ստվերները: Ինչպես այս աշխատանքում, մինչև 1980-ականների կեսերը վրձնած երկերում վարպետի վրձանահարվածները բավականին շոշափելի են:

1980-ականների սկզբին գեղանկարիչը կտավի ամբողջ տարածությունը ողողում է վերևից իջնող կենսական ուժով լեցուն լույսով, որի մեջ առարկաները շողում են թանկարժեք քարի պես: Նման մոտեցումը շարունակվում է նաև 1990-ականների նատյուրմորտներում: Վերոնշյալ մտքի արտահայտություն է «Սաղմոսագիրք» (1982) ստեղծագործությունը: Սեղանին դրված է բաց սաղմոսագիրքը, խաչակիր մոմակալը և գրեթե այդ երկուսի մեջտեղում մարդկային գանգ: Նկարի ձախ անկյունային հատվածը վառ դեղինով է արտահայտված, մյուս մասերը ասես ստվերի ներքո են պատկերված: Նկարի խորքը մեզ արդեն ծանոթ դեղնադարչնագույնն է, որը լրացվում է կանաչ կտորի հատվածով: Աթոյանը կտորը ներկայացնում է պատից կախ, իրապաշտորեն պատկերում կտորի ստացված ծալքերը: Նույն կտորով նա ծածկում է փոքրիկ աթոռակ հիշեցնող իրը, որի վրա դրված է փակ գիրք, հավանաբար կրկին սաղմոսագիրք: Նկարիչը ճշգրտորեն է արտահայտել մոմակալի արտացոլանքը սեղանի վրա, փոխանցել սաղմոսագրքի ձեռագրային ձևավորման մանրամասները: Գանգը և մոմակալը խորհրդանշում են կյանքի և ժամանակի անցողիկությունը, գանգը՝ նաև մարդկանց մահկանացու լինելը<sup>1</sup>: Նման բովանդակությամբ գործերի ենք հանդիպում դեռևս 17-րդ դարի հոլանդական գեղանկարչության մեջ. օրինակ՝ Պիտեր Կլասի «Գանգով նատյուրմորտ» ստեղծագործությունը (1625), որտեղ գեղանկարիչը ներառում է նաև ժամանակի անցողիկությունը խորհրդանշող ժամացույցի պատկեր: Մեկ այլ հետաքրքիր օրինակ է Պաբլո Պիկասոյի «Ահա կյանքը և մահը» (1946) նատյուրմորտը, որտեղ անմիջապես բացված գրքի վրա պատկերված է գանգը: Հետաքրքիր է, որ Ռաֆայել Աթոյանն իր ստեղծագործություններում կյանքի ստվերոտ, բացասական կողմերը ընդհանրապես չի շոշափում: Կարծում ենք՝ նա այլ

<sup>1</sup> Տե՛ս **Холл Д.**, Словарь сюжетов и символов в искусстве, Москва, изд. «Транзит Книг», с. 615:

նկատառումներ է ունեցել նման պատկերների դիմելիս. գանգը նաև մեղք գործած, բայց դարձի եկած սրբերին է խարհրդանշում<sup>1</sup>: Հավանաբար դա է ցանկացել արտահայտել գեղանկարիչը՝ լրացնելով գաղափարը խաչով մոնակալի և սաղմոսագրքի պատկերներով: Հարկ է նշել, որ ի տարբերություն վերը նշված եվրոպական երկու օրինակների, Աթոյանի կտավը չունի անկումային տրամադրություն, գանգը նույնիսկ «ժպտադեմ» է երևում: Այս տպավորությանը, անշուշտ, նպաստում է այն լույսը, որով նկարիչը պատել է ստեղծագործությունը:

1983թ. է թվագրվում «Նարինջներով» գծանկարային նատյուրմորտը: Ռ. Աթոյանը առանց որևէ խորքի նկարի կենտրոնում զամբյուղի մեջ և դրա կողքին ստեղծում է հյութեղ տպավորություն թողնող նարինջների պատկերներ, նաև չորացած ծաղիկներով կուժ է պատկերում: Այս ամենը դրված է ծավլող սփռոցին, որը պատկերվում է ընդամենը մի քանի ուրվագծերի շնորհիվ և թողնում է կենդանի տպավորություն: Աթոյանը բավականին մանրամասնորեն է հաղորդում զամբյուղի հյուսվածքի ձևը, նարինջների կեղևի փոսիկները: Ի տարբերություն 1970-ականների գծանկարների, այստեղ գեղանկարիչը ավելի է կատարելագործում իր գիծը՝ դարձնելով այն առավել նուրբ ու փափուկ, ավելի բարակ ու մանր: Սա գեղանկարչի մեր ունեցած միակ գծանկարային աշխատանքն է 1980-ականներին:

1980-ականների կեսերին մենք տեսնում ենք մի շարք նատյուրմորտներ, որոնք հորինվածքային և գեղանկարչական առանձնահատկություններով նման են իրար. տարբեր են միայն պատկերված իրերն ու առարկաները՝ «Չորացած ծաղիկներ» (1984), «Նատյուրմորտ Ղարաբաղի կուժերով» (1986), «Ալոե» (1986) և այլն: Այս ստեղծագործություններում իրերը գտնվում են նկարների կենտրոնում՝ կտավը բաժանելով երեք մասերի: Բոլոր նկարների համար որպես ետնախորք է ծառայում ստվերային մասում գտնվող դեղնադարչնագույնը: Նկարիչը դիմացի մասում նրբորեն արտացոլում է արևի լույսից սեղանին ընկած իրերի ստվերները, որոնք բնական պատկերներին համապատասխան ճշտությամբ են արտահայտված: Նկարիչն ասես ստեղծում է բախում իրական պատկերների ու նրանց ստվերների միջև: Վերոնշյալ հատկանշական գծերը վերաբերում են նաև «Խաչքարով նատյուրմորտ» (1986) և «Սուրբ մասունքներ» (1988) խորագրերը կրող գեղանկարներին, որոնցում կենտրոնական տեղ է գրավում հայկական ավանդական խաչքարը՝ շրջապատված դաշտային և սենյակային բույսերով, նաև այլ հին իրերի մասունքներով: Այս կոթող-հուշարձանը մեր հինավուրց երկրում հանդիպում է ամենուր՝ ճանապարհներին, գերեզմանոցներում, վանքերում ու տաճարների մոտ: Գեղանկարիչը այս կտավներում տեղադրում է կիսավեր խաչքարերի պատկերներ, ամենայն մանրամասնությամբ

<sup>1</sup> Սույնը, էջ 615:

հաղորդում է դրանց վրայի զարդատարրերը՝ միահյուսելով զարդաքանդակներն ու իր կիրառած ռիթմիկ գծերը:

1991թ. Ռաֆայել Աթոյանը մեկնում է ԱՄՆ և բնակություն հաստատում Ֆրեզնո քաղաքում: Միջև 2014թ. նա ապրում էր այնտեղ, ուներ իր արվեստանոցը: Ժամանակ առ ժամանակ գալիս էր Հայաստան՝ նոր ցուցադրություններ և նվիրատվություններ անելու: 1991թ. մինչ 2014թ. ընկած ժամանակահատվածը մենք պայմանականորեն անվանել ենք «Ամերիկյան շրջան»: Այս շրջանում հայկական թեմաներին զուգընթաց սկսում են հայտնվել ամերիկյան բնության և քաղաքային պատկերներ՝ արմավենիներով ու ամերիկյան շինություններով: Ռաֆայել Աթոյանի Ամերիկյան շրջանի արվեստը, հատկապես 1990-ականներին, մեծ մասամբ վերաբերում է հենց նատյուրմորտներ ստեղծելուն, որոնք իրենց բնույթով տարատեսակ են: Դրանք բավականին մեծ թիվ են կազմում այս շրջանում: 1990-ականների սկզբի յուղաներկ նատյուրմորտներում արվեստագետը չեզոք խորքի վրա կերտում է թանձր վրձնահարվածներով առանձնացող աշխատանքներ: Հետաքրքիր է «Ձկներով նատյուրմորտ» երկը (1993): Սեղանին դրված են ձկներ, հաց, կարտոֆիլ, սոխ, դանակ և խմիչքով լի շիշ՝ բաժակը կողքին: Այստեղ նկատվում է իրերի վերապատկերման հավաստիությունը և ձևերի նյութական կոնկրետությունը: Այս աշխատանքերը հիշեցնում են հոլանդական 17-րդ դարի նատյուրմորտները:

Գեղանկարիչը 1990-ականների ստեղծում է նաև ջրաներկ աշխատանքներ: Սեղանին հայտնվում են թեթև երանգներով արված անանասներ, կոկոսներ, ելակ, բալ, նարինջ, բանան, մանգո, խաղող, իհարկե այդ ամենի կողքին նաև հայկական նուռ («Խաղողով նատյուրմորտ» (1992), «Նռներով նատյուրմորտ» (1994), «Բալով նատյուրմորտ» (1995), «Նարինջներ» (1996), «Անանասով նատյուրմորտ» (1997), «Ելակով նատյուրմորտ» (1997)): Այս գործերում թերևս պակասում է այն աթոյանական շունչը, որ կար նախորդ նատյուրմորտներում: Բայց այս ստեղագործություններն էլ նշանավորվում են իրենց պատկերման ձևով, նոր շնչով և ոճական առանձնահատկություններով: Դրանք աչքի են ընկնում թարմությամբ ու շոշափելիությամբ: Նկարիչը իրապաշտական ընկալմամբ շարունակում է հաղորդել մրգերի և առարկաների նյութեղենությունը: Մրգերը, բացի պարզապես սեղանին դրված լինելուց, կոկիկ դասավորված են սփռոցի վրա, գեղեցիկ ամանների ու զամբյուղների մեջ: Դրանց կողքին դրվող նախորդ շրջանի հին կավե կուժերին փոխարինելու է գալիս նրբորեն զարդարված, բարձրաճաշակ սպասքը: Գեղանկարիչը բավականին մանրամասն է մշակել նաև ժանեկապատ սփռոցները: 1990-ականների այս գործերում նատյուրմորտը ստանում է բնանկարային խորք: Մրգերով սեղանը կա՛մ այգում է դրված, կա՛մ տանը, որի պատուհանից երևում է բնությունը կամ քաղաքային որևէ

հատված: Սա նորույթ էր Աթոյանի արվեստում: Մինչ այս նա նման համադրության չէր դիմել:

2000-ական թվականներին Ռաֆայել Աթոյանի գեղանկարները դառնում են առավել մանրակրկիտ մշակված՝ հասնելով լուսանկարչական ճշգրտության: Գեղանկարիչը հատիկ առ հատիկ պատկերում է իրերի գունային և զարդային յուրաքանչյուր մանրամասնը: Նա դիմում է առավել լայն թեմաների, չի սահմանափակվում միայն զուտ նատյուրմորտի մաս կազմող իրերի պատկերումով: Ստեղծում է միջավայր, որտեղ կիրառվում են այդ իրերը: Լրացնում է դրանք թեյնիկներով, բաժակներով ու այլ գեղեցիկ սպասքով: Նկատելիորեն զգացվում են փոփոխություններ նկարչի ձեռագրում, որոնք, թերևս, ավելի են հարստացնում և կատարելագործում նրա ստեղծագործ մտքի գեղանկարչական վերարտադրությունները:

Ուշագրավ նատյուրմորտային աշխատանքներ են հետևյալ երեք ստեղծագործությունները, որոնք արված են միևնույն սենյակում տարբեր դիտակետերից՝ «Նատյուրմորտ անթառամ ծաղիկներով», «Ինտերիեր», «Լիլիթից հիշողություններ» (2001): Դրանք ներկայացնում են կահավորված սենյակի ներտարածքային մի հատված, որի կենտրոնում սեղանն է նատյուրմորտային իրերով: Ռաֆայել Աթոյանը մշակել է իրերի բոլոր հատվածները, այդ թվում գորգերի, սփռոցի, բազմոցի զարդանախշերը: Գեղանկարիչն իր այս ստեղծագործությունները աբողջացրել է նախորդ տարիներին ստեղծած կտավների օրինակները խորքում պատերին պատկերելով:

«Նատյուրմորտ անթառամ ծաղիկներով» նկարում նա կլոր սեղանին դրված ծաղիկների կողքին պատկերում է կիսակտրած մրգեր, հյութով բաժակ, որի թափանցիկությունը զարմացնում է: Այդ փոքրիկ անկյունը դարձել է արվեստի գործ, որը լրացրել է կողքերին քանդակային ստեղծագործություններ տեղադրելով: Կտավի խորքում Աթոյանի «Երկեր Կոմիտասի» (1981) եռամաս աշխատանքն է, որը չնայած բավական հեռու լինելուն՝ պահպանել է իր անհատական գրավչությունը և մանրամասն մշակված լինելու տպավորությունը:

«Լիլիթից հիշողություններ» ստեղծագործության մեջ դիմացի պատին կախված է նկարչի քրոջ՝ Լիլիթի դիմանկարը՝ արված հենց Աթոյանի կողմից: Սփռոցով կիսափակ սեղանի վրա դրված են մոմակալով վառված մոմեր, ջութակ և նոտաներ: Արդյո՞ք որևէ կապ ունեցել է նկարչի քույրը երաժշտական այդ գործիքի հետ, թե ոչ, չենք կարող ասել: Կիսավառված մոմն ու երաժշտական գործիքները կիսատ մնացած կյանքի խորհդանիշն են<sup>1</sup>: Հավանաբար, այս աշխատանքը 1988թ. ավերիչ երկրաշարժի

<sup>1</sup> Տե՛ս **Холл Д.**, Словарь сюжетов и символов в искусстве, Москва, изд. «Транзит Книг», с. 471:



Ժամանակ մահացած երիտասարդ քրոջ<sup>1</sup> հիշատակին է նվիրված: Նկարի ստեղծումը մենք վերագրում ենք 2000-ականներին: Նախ այն իր հորինվածքային ու գունային լուծմամբ, ընդհանուր կատարման եղանակով նման է վերը նշված երկու գործերին, երկրորդ՝ թեև մեր հանդիպած թվագրությունում տրվում է 1986թ, բայց սա հնարավոր չէ, քանի որ, ինչպես նշեցինք, Ռաֆայել Աթոյանի քույրը մահացել է 1988 թ.: Ցավոք, աշխատանքի վրա չկա նկարչի ստորագրությունը:

2005թ. սկսած՝ Ռաֆայել Աթոյանի նատյուրմորտներում մենք նկատում ենք վերադարձ դեպի 1980-ականների նատյուրմորտների հատկանշական ձևերը՝ չեզոք խորքում արևի լուսով ողողված առարկաներ, դրանց ստվերների պատկերումը հարթ, միատոն սեղանին: Վերականգնվում են նախկինում ընտրված իրերը՝ հին սափորներ, նռներ, սենյակային և դաշտային ծաղիկներ («Անթառամ ծաղիկներով նատյուրմորտ» (2005), «Նռներով նատյուրմորտ» (2006), «Հին մասունքներ» (2007), «Նատյուրմորտ սերկևիլներով» (2007), որտեղ խորքում վարագույր հիշեցնող կտորային ձևավորումներ են արված, «Փշերով ու դդումով նատյուրմորտ» (2010), «Մրգերով նատյուրմորտ» (2011) և այլն): Ի տարբերություն 1980-ականների, այս ստեղագործություններում գեղանկարիչը ավելի ազատ է տեղաբաշխել պատկերները, դրանք իրար շատ մոտ չեն:

Հայ ժամանակակից գեղանկարչության վառ ներկայացուցիչ Ռաֆայել Աթոյանը ստեղծագործական տարիներին բավականին մեծ թվով նատյուրմորտ աշխատանքներ է վրձնել: Հավատարիմ մնալով ակադեմիական, դասական գեղանկարչությանը՝ նա կերտել է իր ուրույն ձեռագիրը:

Ռաֆայել Աթոյանի ստեղծագործությունները, ենթարկվելով որոշ ոճային և հորինվածքային փոփոխությունների, կրում են նկարչի մոտեցման և գաղափարական ընկալման կնիքը:

Երկար տարիներ ապրելով և ստեղծագործելով իր հայրենիքում, նաև Ֆրեզնոյում՝ Ռաֆայել Աթոյանը իր գեղանկարչական աշխատանքներում հավատարիմ է մնում հայ ազգային գեղանկարչական ավանդույթներին: Նրա ստեղծագործություններում պատկերված յուրաքանչյուր մանրամասն դիտողին համակում է ջերմությամբ, դրական զգացմունքներով ու բարությամբ, ինչպիսին հենց նկարիչն էր:

<sup>1</sup> Տե՛ս **Khachatryan Sh.**, Rafael Atoyan, Canada, 1999, «AAA publishing house», p. 13:

**Аревик Празян, Натюрморт в искусстве Рафаэла Атояна.** Данная статья исследует натюрморты знаменитого армянского художника Рафаэла Атояна. В течении творческих лет достигая индивидуальности своего почерка, оставаясь верным классическим традициям армянской национальной живописи, известный мастер создавал прекрасные реалистические работы. В данной статье хронологической последовательностью изучены натюрморты разных этапов творчества Р. Атояна с помощью сравнительных, аналитических и описательных методов.

**Arevik Prazyan, The «still life» in Rafael Atoyan`s art.** This article is about the remarkable Armenian painter Rafayel Atoyan`s works, that were done in genre «still life». During his creative activity he reached the individuality of his own penmanship. Remaining loyal to the classic traditions of the Armenian national painting, the great artist created many admirable realistic «still life» works. This article is a research of the «still life» conveyed painted in different periods of R. Atoyan`s art. The research is done with a chronological sequence of the works by the comparative, analytical and descriptive methods.

**Արևիկ Պրազյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի մագիստրատուրայի շրջանավարտ, ԵՊՀ մշակույթի կենտրոնի ավագ տեսուչ:**